

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N12 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

08.12.2017թ.
Ժամը 17⁰⁰

ք.Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա. Համբարձումյան «Խազեր» էկոլոգոմշակության ՀԿ նախագահ
Ս. Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Գ.Օգանեզովա «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ
Ի. Զարաֆյան «էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Մ.Զաքրյան «Հնարային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ
Ժ.Գալյան «Հայկական էկոտուրիստական ասոցիացիա» ՀԿ
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

- Հ. Պարսամյան ՀՀ բնապահպանության նախարարի իրավախորհրդատու
Ա. Պեպանյան ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հարց 1. Հայաստանում բնապահպանական մշակույթի ձևավորման հարցերը

Հարց.2 ՀՀ-ի կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների 2014-17թթ կատարման խնդիրները և առաջարկների քննարկում

Խորհրդի նախագահ **Ա. Մինասյանը** հաստատման ներկայացրեց նիստի օրակարգը: **Ելույթով հանդես եկավ Հ. Սանասարյանը**-Նշեց, որ առաջարկել էր խորհրդի օրակարգում ընդգրկել «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի հանքավայրի շահագործմանը վերաբերող հարց, ինչը օրակարգում չկա:

